2.2.14 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրից, արտոնագրերից և այլն:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային մեթոդով օգտակար ծառայության ընթացքում՝ 1 ից 10 տարվա ընթացում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հատկանիշներ: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Անորոշ օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, սակայն յուրաքանչյուր տարի գնահատվում են արժեզրկման առումով՝ անհատապես կամ առանձին դրամաստեղծ միավորի համար: Անորոշ օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվները յուրաքանչյուր տարի հսկվում են հիմնավորելու համար նրանց հաշվառման շարունակականությունը նշված դասում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

2.2.15 Վաճառքի համար պահվող ակտիվներ

Ոչ ընթացիկ ակտիվները դասակարգվում են վաճառքի համար պահվող, երբ հաշվեկշռային արժեքը ենթակա է փոխհատուցման ոչ թե դրանց հետագա շահագործման, այլ վաճառքի միջոցով: Դրանց վաճառքը ենթադրվում է իրականացնել վաճառքի համար պահվող դասակարգումից հետո մեկ տարվա ընթացքում:

Վաճառքի համար պահվող դասակարգված ոչ ընթացիկ ակտիվները ճանաչվում են հաշվեկշռային արժեքի կամ իրական արժեքի՝ հանած վաճառքի ծախսերը, նվազագույնով: Եթե վերջինս ավելի փոքր է, քան հաշվեկշռային արժեքը, ապա ճանաչվում է արժեզրկումից կորուստ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Իրական արժեքի՝ հանած վաճառքից ծախսերը, հետագա ցանկացած աճ ճանաչվում է միայն տվյալ ակտիվի նախկինում արժեզրկված գումարների չափով:

2.2.16 Բռնագանձված ակտիվներ

Որոշ դեպքերում, ակտիվները բռնագանձվում են վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում: Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

2.2.17 Ներգրաված միջոցներ

Ներգրավված միջոցները, որոնք ներառում են ՀՀ կառավարության, այլ ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների հաշիվները, թողարկված արժեթղթերը, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրավված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են

համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

2.2.18 Կենսաթոշակներ

Բանկում, աշխատակիցների աշխատավարձի հիման վրա հաշվարկված որոշակի տոկոսը Հայաստանի Հանրապետության պետական կենսաթոշակային համակարգին փոխանցելուց բացի, այլ հատուկ կենսաթոշակային հիմնադրամ չի ձևավորվում: Նշված համակարգին հատկացումների հետ կապված ծախսերը արտացոլվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջանում, որին դրանք վերաբերվում են:

2.2.19 Ֆինանսական երաշխիքներ

Ֆինանսական երաշխիքների պայմանագրերը այն պայմանագրերն են, որոնք պահանջում են, որ երաշխիքը տրամադրողը փոխհատուցի երաշխիքը ստացողին կոնկրետ պարտատպանի կողմից պարտքային գործիքի ժամկետներին համաձայն վճարումները ժամանակին չկատարելու պատճառով վերջինիս կողմից կրած վնասների դիմաց: Նման ֆինանսական երաշխիքներ տրամադրվում են բանկերին, ֆինանսական և այլ կազմակերպություններին հաճախորդների վարկերը, օվերդրաֆտները և այլ բանկային գործիքները ապահովելու նպատակով:

Ֆինանսական երաշխիքները ֆինանսական հաշվետվություններում սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով «Այլ պարտավորություններ»-ում որպես կոմիսիոն վճար: Սկզբնական ճանաչումից հետո Բանկը յուրաքանչյուր երաշխավորության տակ պարտավորությունը չափում է ամորտիզացված վճարից և երաշխավորության արդյունքում առաջացած ցանկացած ֆինանսական պարտավորություն լուծելու համար անհրաժեշտ ելքերի լավագույն գնահատումից առավելագույնով:

2.2.20 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Բանկը ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

2.2.21 Բաժնետիրական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը և չմարվող արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Էմիսիոն եկամուտ

Էմիսիոն եկամուտը ներառում է բաժնետոմսերի թողարկումից ստացված ցանկացած հավելավճար: Գործարքի գծով ցանկացած ծախսում, որը կապված է բաժնետոմսերի թողարկման հետ նվազեցվում է էմիսիոն եկամուտից:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Մինչև հաշվապահական հաշվեկշռի ամսաթիվը հայտարարված կամ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո, բայց մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

2.2.22 Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում են հաշվանցված, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

2.2.23 Սեզմենտների ներկայացում

Գործառնական սեզմենտը հանդիսանում է Բանկի բիզնես գործառնությունների բաղկացուցիչ մասը, որոնցից այն կարող է վաստակել եկամուտ և կատարել ծախսեր, ներառյալ Բանկի այլ որևէ բաղկացուցիչ մասին հետ կապված գործառնություններից եկամուտներն ու ծախսերը: Գործառնական սեզմենտները հատկորոշելիս Բանկի ղեկավարությունը տարանջատում է Բանկի այն բաղկացուցիչ մասերը, որոնք ներառված են ապրանքներ կամ ծառայությունների մատուցման մեջ (բիզնես սեզմենտ): Բոլոր գործառնական սեզմենտների գործառնական արդյունքները կանոնավոր կերպով վերանայվում են Բանկի գլխավոր գործադիր տնօրենի կողմից՝ կայացնելու համար որոշում սեզմենտի վրա կիրառվող աղբյուրների վերաբերյալ և գնահատելու այդ ընթացքը, և որի մասով առկա է առանձին ֆինանսական տեղեկատվություն: Այս ֆինանսական հաշվետվությունների շրջանակներում Բանկի աշխարհագրական սեզմենտները ներկայացված են հիմնվելով գործընկերների գտնվելու վայրի վրա՝ հիմնվելով ավելի շուտ տնտեսական ռիսկի, քան իրավաբանական ռիսկի վրա:

2.2.24 Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՅՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Բանկի ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Ներդրումային արժեթղթերի դասակարգում

Բանկի ներդրումային արժեթղթերը ներառում են ՀՀ պետական և ոչ պետական պարտատոմսերը, ոչ պետական բաժնետոմսերը: Սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը դասակարգում է արժեթղթերը որպես վաճառքի համար նատչելի ֆինանսական ակտիվներ, որոնց իրական արժեքի ճշգրտումն իրականացվում է կապիտալում:

Կապակցված կողմերի հետ գործառնություններ

Բանկն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական պայմաններով: Գործող շուկայի բացակայության դեպքում Բանկը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա:

Վարկերի և այլ փոխատվությունների գծով արժեզրկումից պահուստներ

Բանկը գնահատում է խնդրահարույց վարկերը և փոխատվությունները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի համար՝ պարզելու համար, թե արդյոք անհրաժեշտ է արժեզրկման պահուստ ձևավորել ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Մասնավորապես, ղեկավարության դատողությունն անհրաժեշտ է ապագա դրամական հոսքերի գումարը և պարբերականությունը գնահատելու համար, երբ անհրաժեշտ է պահանջվող պահուստի չափը որոշել: Նման գնահատումները հիմնված են որոշ գործոնների շուրջ ենթադրությունների վրա և ներկա արդյունքները կարող են տարբեր լինել՝ հանգեցնելով պահուստում հետագա փոփոխությունների:

Նշանակալի վարկերի և փոխառությունների համար անհատական ստեղծված հատուկ պահուստներից բացի, Բանկը նաև ստեղծում է արժեզրկման խմբային պահուստներ, այն ռիսկերի գծով, որոնք չնայած որ անհատապես չեն գնահատվել, սակայն պարունակում են չվճարման ավելի մեծ ռիսկ, քան սկզբնապես որոշվել էր: Սա հաշվի է առնում այնպիսի գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են վատթարացումը երկրի ռիսկում, արդյունաբերության մեջ և տեխնոլոգիական հնացումը, ինչպես նաև բացահայտված կառուցվածքային թուլությունները կամ դրամական հոսքերի նվազումները:

Չարկային օրենսդրություն

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների:

Կապիտալի գործիք հանդիսացող վաճառքի համար մատչելի ներդրումների արժեզրկում

Բանկը համարում է կապիտալի գործիք հանդիսացող վաճառքի համար մատչելի ներդրումն արժեզրկված, երբ դրա իրական արժեքի նվազումը էական է կամ կրում է երկարատև բնույթ: Որոշելու համար էական է կամ երկարատև նվազումը՝ Բանկը կատարում է որոշակի դատողություններ: Այդ դատողությունները կատարելիս, այլ գործոնների հետ մեկտեղ, Բանկը հաշվի է առնում նաև բաժնետոմսերի գնի փոփոխականությունը: Բացի դրանից, արժեզրկումը հնարավոր է, երբ առկա են ապացույցներ, որ վատացել է ֆինանսական վիճակը տվյալ կազմակերպության, արդյունաբերության կամ ճյուղի, որտեղ կատարվել է ներդրումը, կատարվել են փոփոխություններ տեխնոլոգիաներում և գործառնական կամ ֆինանսական դրամական հոսքերում:

Կապիտալի գործիք հանդիսացող վաճառքի համար մատչելի ներդրումների արժեզրկում

Բանկը համարում է կապիտալի գործիք հանդիսացող վաճառքի համար մատչելի ներդրումն արժեզրկված, երբ դրա իրական արժեքի նվազումը էական է կամ կրում է երկարատև բնույթ: Որոշելու համար էական է կամ երկարատև նվազումը՝ Բանկը կատարում է որոշակի դատողություններ: Այդ դատողությունները կատարելիս, այլ գործոնների հետ մեկտեղ, Բանկը հաշվի է առնում նաև բաժնետոմսերի գնի փոփոխականությունը: Բացի դրանից, արժեզրկումը հնարավոր է, երբ առկա են ապացույցներ, որ վատացել է ֆինանսական վիճակը տվյալ կազմակերպության, արդյունաբերության կամ ճյուղի, որտեղ կատարվել է ներդրումը, կատարվել են փոփոխություններ տեխնոլոգիաներում և գործառնական կամ ֆինանսական դրամական հոսքերում:

**Ծանոթագրություն 3 Ջուտ տոկոսային և նմանատիպ եկամուտներ
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ**

	01.01.2015.- 31.12.2015	01.01.2014.- 31.12.2014
Տոկոսային եկամուտ բանկի ընթացիկ հաշիվներից, բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված ավանդներից և վարկերից	297,106	1,182,514
Տոկոսային եկամուտ հաճախորդներին տրված վարկերից և փոխառություններից	8,190,828	7,935,223
Տոկոսային եկամուտ պարտքային արժեթղթերից	1,414,464	1,431,796
Տոկոսային եկամուտ «Ռեպո» պայմանագրերից	323,557	478,094
Այլ տոկոսային եկամուտ	22,863	35,372
Ընդամենը	10,248,818	11,062,999

Տոկոսային և նմանատիպ ծախսեր

	01.01.2015.- 31.12.2015	01.01.2014.- 31.12.2014
Տոկոսային ծախսեր բանկի ընթացիկ հաշիվների, բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրաված ավանդների և վարկերի դիմաց	2,752,484	2,288,921
Տոկոսային ծախսեր հաճախորդների ժամկետային ավանդների և ընթացիկ հաշիվների դիմաց	2,111,573	2,373,956
Տոկոսային ծախսեր բանկի կողմից թողարկված արժեթղթերի դիմաց	206,692	148,192
Տոկոսային ծախսեր «Ռեպո» պայմանագրերի դիմաց	604,266	16,137
Այլ տոկոսային ծախսեր	25,828	5,138
Ընդամենը	5,700,843	4,832,344

Ջուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ	4,547,975	6,230,655
--	------------------	------------------

**Ծանոթագրություն 4 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ**

	01.01.2015.- 31.12.2015	01.01.2014.- 31.12.2014
Դրամարկղային գործառնություններից	79,306	92,274
Հաշվարկային ծառայություններից	515,532	480,218
Երաշխիքներից, հոծարագրերով, ակրեդիտիվներով, հավատարմագրային կառավարման գործառնություններից	9,688	20,757
Արտարժույթով և արժեթղթերով գործառնություններից	89,460	77,430
Վճարային քարտերի սպասարկումից	307,977	301,563
Լոմբարդային վարկերի տրամադրումից եկամուտ	-	15,142
Այլ կոմիսիոն վճարներ	325	-
Ընդամենը	1,002,288	987,384

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր

	01.01.2015.- 31.12.2015	01.01.2014.- 31.12.2014
Թղթակցային և այլ հաշիվների դիմաց կոմիսիոն վճարներ	12,329	10,108
Վճարային քարտերով գործառնությունների գծով վճարներ	393,532	288,247
Երաշխիքներից, հոծարագրերով, ակրեդիտիվներով, հավատարմագրային կառավարման գործառնությունների գծով վճարներ	34,167	26,656
Արտարժույթով և արժեթղթերով գործառնություններից	3,400	14,843
Այլ կոմիսիոն վճարներ	49,900	51,060
Ընդամենը	493,328	390,914

Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ	508,960	596,470
--	----------------	----------------

	01.01.2015.- 31.12.2015	01.01.2014.- 31.12.2014
Եկամուտ շահաբաժիններից	325	17
Ընդամենը	325	17

Ծանոթագրություն 5 Ջուտ եկամուտ առևտրային գործառնություններից Առևտրային նպատակով պահվող ներդրումներից

	01.01.2015.- 31.12.2015	01.01.2014.- 31.12.2014
Առևտրային նպատակներով պահվող ներդրումների առք ու վաճառքից զուտ եկամուտ, այդ թվում՝ բաժնետոմսերից պարտքային արժեթղթերից ածանցյալներից	-	-
Առևտրային նպատակներով պահվող ներդրումների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ	(25,079)	-
Ընդամենը	(25,079)	-

Վաճառքի համար մատչելի ներդրումներից զուտ եկամուտ

	01.01.2015.- 31.12.2015	01.01.2014.- 31.12.2014
Վաճառքի համար մատչելի ներդրումների առք ու վաճառքից զուտ եկամուտ, այդ թվում՝ բաժնետոմսերից պարտքային արժեթղթերից	(170,238)	(153,328)
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ	193,035	340,395
Ընդամենը	22,797	187,067

Արտարժույթային գործառնություններից

	01.01.2015.- 31.12.2015	01.01.2014.- 31.12.2014
Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտ	867,251	919,652
Արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ եկամուտ	(85,768)	(921)
Ընդամենը	781,483	918,731

Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներից և հուշադրամներից

	01.01.2015.- 31.12.2015	01.01.2014.- 31.12.2014
Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորների և հուշադրամների առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտ	107,627	60,116
Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորների և հուշադրամների վերագնահատումից ստացված զուտ եկամուտ	(497)	91,520
Ընդամենը	107,130	151,636
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	886,331	1,257,434

**Ծանոթագրություն 6 «Այլ գործառնական եկամուտներ»
Այլ գործառնական եկամուտ**

	01.01.2015.- 31.12.2015	01.01.2014.- 31.12.2014
Եկամուտներ ստացված տույժերից և տուգանքներից	520,763	317,763
Ֆակտորինգից ստացված եկամուտներ	-	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից ստացված զուտ եկամուտներ	8,785	54,248
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից և արժեզրկման հակադարձումից զուտ եկամուտներ	-	-
Արտասովոր եկամուտներ (առկայության դեպքում)	-	-
Այլ եկամուտներ	25,824	42,259
Ընդամենը	555,372	414,270

Ծանոթագրություն 7 «Ակտիվների հնարավոր կորուստների պահուստին կատարված զուտ մասհանումներ»

Բանկերի նկատմամբ պահանջների գծով	01.01.2015.- 31.12.2015	01.01.2014.- 31.12.2014
Սկզբնական մնացորդ	-	-
Պահուստին կատարված մասնահանումներ	-	-
Պահուստին կատարված մասնահանումների վերադարձ	-	-
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	-	-
Նախկինում հաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ	-	-
Պահուստի օգտագործում	-	-
Վերջնական մնացորդ	-	-

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով	01.01.2015.- 31.12.2015	01.01.2014.- 31.12.2014
Սկզբնական մնացորդ	22,396	-
Պահուստին կատարված մասնահանումներ	3,566	482,256

Պահուստին կատարված մասնահանումների վերադարձ	(18,946)	(459,860)
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	(15,380)	22,396
Նախկինում հաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ	-	-
Պահուստի օգտագործում	-	-
Վերջնական մնացորդ	7,016	22,396

Հաճախորդներին տրված վարկերի, փոխատվությունների գծով	01.01.2015.- 31.12.2015	01.01.2014.- 31.12.2014
Սկզբնական մնացորդ	1,642,694	960,320
Պահուստին կատարված մասնահանումներ	3,602,128	2,909,657
Պահուստին կատարված մասնահանումների վերադարձ	(2,678,855)	(2,228,072)
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	923,273	681,585
Նախկինում հաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ	(938,518)	(21,607)
Պահուստի օգտագործում	-	-
Վերջնական մնացորդ	1,627,449	1,620,298

Ներդրումների գծով	01.01.2015.- 31.12.2015	01.01.2014.- 31.12.2014
Սկզբնական մնացորդ	-	-
Պահուստին կատարված մասնահանումներ	-	-
Պահուստին կատարված մասնահանումների վերադարձ	-	-
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	-	-
Նախկինում հաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ	-	-
Պահուստի օգտագործում	-	-
Վերջնական մնացորդ	-	-

Այլ ակտիվների գծով	01.01.2015.- 31.12.2015	01.01.2014.- 31.12.2014
Սկզբնական մնացորդ	17,865	18,322
Պահուստին կատարված մասնահանումներ	129,530	1,078,172
Պահուստին կատարված մասնահանումների վերադարձ	(100,864)	(1,041,717)
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	28,666	36,455
Նախկինում հաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ	(32,734)	(36,912)
Պահուստի օգտագործում	-	-
Վերջնական մնացորդ	13,797	17,865

Վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածների գծով	01.01.2015.- 31.12.2015	01.01.2014.- 31.12.2014
Սկզբնական մնացորդ	-	-
Պահուստին կատարված մասնահանումներ	-	-
Պահուստին կատարված մասնահանումների վերադարձ	-	-
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	-	-
Նախկինում հաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ	-	-
Պահուստի օգտագործում	-	-
Վերջնական մնացորդ	-	-

Ընդամենը զուտ մասհանումներ պահուստներին	936,559	740,436
--	----------------	----------------

Չրապարակվող ֆինանսական հաշվետվություններում և ծանոթագրություններում բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների, ինչպես նաև հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների գծով ընդհանուր պահուստները չեն ճանաչվել:

Ծանոթագրություն 8 Ընդհանուր վարչական ծախսեր

	01.01.2015.- 31.12.2015	01.01.2014.- 31.12.2014
Ծախսեր հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով*	2,213,627	2,176,016
Ծախսեր սոցիալական ապահովության պետական հիմնադրամին հատկացումների գծով	-	-
Վերապատրաստման և ուսուցման գծով ծախսեր	2,057	166
Գործուղման ծախսեր	36,282	32,323
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	330,790	328,547
Ապահովագրության գծով ծախսեր	12,793	14,608
Բանկի սարքավորումների սպասարկման և պահպանման գծով ծախսեր	148,196	143,783
Բանկի շենքերի տնտեսական պահպանության և անվտանգության գծով ծախսեր	260,080	238,796
Աուդիտային և խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	51,666	21,097
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	102,249	108,849
Տրանսպորտային ծախսեր	34,618	36,885
Ծախսեր հարկերի (բացառությամբ շահութահարկի), տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով	166,333	173,672
Գրասենյակային և կազմակերպչական ծախսեր	52,311	56,296
Վարկերի տրամադրման և վերադարձման գծով ծախսեր	13,242	3,040
Այլ վարչական ծախսեր	37,276	46,778
Ընդամենը	3,461,520	3,380,856

* 2015թ. չորրորդ եռամսյակում Բանկի աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 672 և մեկ աշխատողին բաժին ընկնող միջին ամսեկան աշխատավարձը՝ 261.3 հազ.դրամ:

* 2014թ. չորրորդ եռամսյակում Բանկի աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 665 և մեկ աշխատողին բաժին ընկնող միջին ամսեկան աշխատավարձը՝ 254,49 հազ.դրամ:

Ծանոթագրություն 9 Այլ գործառնական ծախսեր

	01.01.2015.- 31.12.2015	01.01.2014.- 31.12.2014
Վճարված տուգանքներ և տույժեր	44,481	762
Ինկասացիայի համար կատարված վճարումներ	67,532	76,370
Գովազդային և ներկայացուցչական ծախսեր	107,084	159,862
Ֆակտորինգի գծով ծախսեր	-	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր	459,744	440,450
Կորուստներ ակտիվների արժեզրկոմից	-	-
Արտասովոր ծախսեր	-	-
Ավանդների երաշխավորման հիմնադրամին հատկացումներ	56,942	64,486
Այլ ծախսեր*	101,723	95,045
Ընդամենը	837,506	836,975

* Այլ ծախսերը հիմնականում առաջացել են ԱրՔ-ի գծով գործառնական ծախսերից:

Ծանոթագրություն 10 Վերահսկվող միավորումներում ներդրումներից զուտ շահույթ/վնաս

	01.01.2015.- 31.12.2015	01.01.2014.-31.12.2014
Ասոցիացված կազմակերպություններում ներդրումներից	-	-
Համատեղ վերահսկվող միավորներում ներդրումներից	-	-
Դուստր բանկերում ներդրումներից	-	-
Այլ դուստր ընկերություններում ներդրումներից	-	-
Ընդամենը	-	-

Ծանոթագրություն 11 Շահութահարկի գծով ծախս

	01.01.2015.- 31.12.2015	01.01.2014.-31.12.2014
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	326,804	700,508
Տվյալ ժամանակաշրջանում ճանաչված՝ նախորդ ժամանակաշրջանների ընթացիկ հարկի ճշգրտումները	-	-
Հետաձգված հարկի գծով ծախս	(16,821)	(3,361)
Ընդամենը	309,983	697,147

	01.01.2015.- 31.12.2015	Արդյունավետ դրույթաչափ (%)	01.01.2014.- 31.12.2014	Արդյունավետ դրույթաչափ (%)
Շահույթը մինչև հարկումը	1,263,378	-	3,540,579	-
Շահութահարկ՝ 20% դրույթաչափով	252,676	20	708,116	20
Հարկման նպատակով եկամուտների և ծախսերի ճշգրտումներ ոչ ժամանակավոր տարբերությունների գծով	-	-	-	-
Չհարկվող եկամուտներ	-	-	(18,304)	-
Չնվազեցվող ծախսեր	17,200	-	7,151	-
Նախորդ տարվա հաշվարկված հարկային ծախսի ճշտում	(16,821)	-	184	-
Շահութահարկի գծով ծախս	56,928	-	-	-
Ընդամենը	309,983		697,147	

	Մնացորդը 31.12.2014թ. դրությամբ	Ֆինանսական արդյունքներով ճանաչված	Սեփական կապիտալում ճանաչված	Մնացորդը 31.12.2015թ. դրությամբ
Հետաձգված հարկային ակտիվներ, այդ թվում՝	113,745	-	45,213	158,958
Առևտրային նպատակով պահվող արժեթղթերի գծով	-	-	-	-
Վաճառքի համար մատչելի արժեթղթերի գծով	15,856	-	34,873	50,729
Հիմնական միջոցների գծով	-	-	-	-
Այլ ակտիվների գծով	97,889	-	10,340	108,229
Ստեղծված պահուստների գծով	-	-	-	-
Այլ պարտավորությունների գծով	-	-	-	-
Հետաձգված հարկային պարտավորություններ, այդ թվում՝	46,828	(6,482)	-	40,346
Առևտրային արժեթղթերի գծով	-	-	-	-
Վաճառքի համար մատչելի արժեթղթերի գծով	-	-	-	-
Հիմնական միջոցների գծով	-	-	-	-
Այլ ակտիվների գծով	16,073	4,777	-	20,850
Այլ պարտավորությունների գծով	30,755	(11,259)	-	19,496
Ջուտ հետաձգված հարկային ակտիվ/պարտավորություն	66,917	6,482	45,213	118,612

Ծանոթագրություն 12 Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ

	01.01.2015.- 31.12.2015	01.01.2014.- 31.12.2014
Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ հարկումից հետո	953,395	2,843,432
Տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված շահաբաժիններ արտոնյալ բաժնետոմսերի գծով	-	-
Սովորական բաժնետոմսերի սեփականատերերին վերագրվող տվյալ ժամանակաշրջանի զուտ շահույթ (վնաս)	953,395	2,843,432
Տվյալ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվը	1,277,501	1,277,501
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	0.75	2.42

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող համապարփակ ֆինանսական արդյունք	01.01.2015.- 31.12.2015	01.01.2014.- 31.12.2014
Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ հարկումից հետո	813,900	2,333,678
Տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված շահաբաժիններ արտոնյալ բաժնետոմսերի գծով	-	-
Սովորական բաժնետոմսերի սեփականատերերին վերագրվող տվյալ ժամանակաշրջանի զուտ շահույթ (վնաս)	813,900	2,333,678
Տվյալ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվը	1,277,501	1,277,501
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող համապարփակ ֆինանսական արդյունք	0.64	2.40

Ծանոթագրություն 13

Կանխիկ դրամական միջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում

Կանխիկ դրամական միջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	31.12.2015	31.12.2014
Կանխիկ դրամական միջոցներ	7,288,234	10,047,510
Դրամական միջոցների այլ տեղաբաշխումներ	1,627,828	1,447,646
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում*	26,015,976	29,573,199
Ավանդային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	-	-
Դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում**	320,000	380,000
Հաշվեգրված տոկոսներ ՀՀ ԿԲ-ում թղթակցային հաշիվներից և ավանդներից	-	-
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	35,252,038	41,448,355

*31.12.15թ. դրությամբ Բանկի ՀՀ ԿԲ-ում թղթակցային հաշվի մնացորդը ներառում է Բանկի կողմից ներգրավված միջոցների դիմաց պարտադիր պահուստավորման ենթակա գումարը, որը կազմում է 14 713 333 հազ. ՀՀ դրամ:

**31.12.14թ. դրությամբ Բանկի ՀՀ ԿԲ-ում թղթակցային հաշվի մնացորդը ներառում է Բանկի կողմից ներգրավված միջոցների դիմաց պարտադիր պահուստավորման ենթակա գումարը, որը կազմում է 13 935 991 հազ. ՀՀ դրամ:

**31.12.15թ. դրությամբ Բանկի ՀՀ ԿԲ-ում դեպոնացված միջոցները հանդիսանում են Արքա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների երաշխիքային ավանդ և կազմում են 320 000 հազ. ՀՀ դրամ:

**31.12.14թ. դրությամբ Բանկի ՀՀ ԿԲ-ում դեպոնացված միջոցները հանդիսանում են Արքա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների երաշխիքային ավանդ և կազմում են 380 000 հազ. ՀՀ դրամ:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում/վերջում

	01.01.2015	31.12.2015	01.01.2014	31.12.2014
Կանխիկ դրամական միջոցներ	10,047,510	7,288,234	2,444,892	10,047,510
Դրամական միջոցների այլ տեղաբաշխումներ	1,447,646	1,627,828	957,947	1,447,646
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	29,573,199	26,015,976	16,870,563	29,573,199
Ավանդային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	-	-	22,011,294	-
Դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում	380,000	320,000	920,000	380,000
Թղթակցային հաշիվներ ՀՀ բանկերում	33,062	62	26,650	33,062
Թղթակցային հաշիվներ ոչ ռեզիդենտ բանկերում	3,656,123	4,239,337	1,615,383	3,656,123
Ընդամենը	45,137,540	39,491,437	44,846,729	45,137,540

Ծանոթագրություն 14 Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Ընթացիկ հաշիվներ	31.12.2015	31.12.2014
ՀՀ բանկերում	62	33,062
ԲԲԲ-(Բաա3) և բարձր վարկանիշ ունեցող բանկերում	4,097,182	3,400,906
ԲԲԲ-(Բաա3)-ից ցածր վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող բանկերում	142,155	255,216
Հաշվեգրված տոկոսներ	-	-
Ընդամենը	4,239,399	3,689,184
Միջբանկային վարկեր և ավանդներ	-	-
ՀՀ ԿԲ-ում`	-	-
- վարկեր և ավանդներ	-	-
- ֆակտորինգ	-	-
- ֆինանսական վարձակալություն	-	-
- ռեպո (հետգնման) պայմանագրեր	-	-
-այլ	-	-
ՀՀ բանկերում`	2,237,141	444,648
- վարկեր և ավանդներ	2,176,863	-
- ֆակտորինգ	-	-
- ֆինանսական վարձակալություն	-	-
- ռեպո (հետգնման) պայմանագրեր	-	407,710
- ակրեդիտիվներ և բանկային երաշխիքներ	-	-
-այլ*	60,278	36,938
ԲԲԲ-(Բաա3) և բարձր վարկանիշ ունեցող բանկերում`	-	43,849
- վարկեր և ավանդներ	-	-
- ֆակտորինգ	-	-
- ֆինանսական վարձակալություն	-	-
- ռեպո (հետգնման) պայմանագրեր	-	-
- ակրեդիտիվներ և բանկային երաշխիքներ	-	-
-այլ*	-	43,849
ԲԲԲ-(Բաա3)-ից ցածր վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող բանկերում`	644,389	-
- վարկեր և ավանդներ	-	-

- ֆակտորինգ	-	-
- ֆինանսական վարձակալություն	-	-
- ռեպո (հետգնման) պայմանագրեր	-	-
- ակրեդիտիվներ և բանկային երաշխիքներ	-	-
-այլ	644,389	-
Հաշվեգրված տոկոսներ	2,326	458
Ընդամենը	2,883,856	488,955
Բանկերի նկատմամբ պահանջների գծով հնարավոր կոր. պահուստ	-	-
Ձուտ պահանջներ բանկերի նկատմամբ	7,123,255	4,178,139

Ֆինանսական կազմակերպություններում վարկեր և ավանդներ, այլ պահանջներ		
ՀՀ ֆինանսական կազմակերպություններում՝	4,137,140	6,157,401
- վարկեր և ավանդներ	2,100,624	2,224,267
- ֆակտորինգ	-	-
- ֆինանսական վարձակալություն	-	-
- ռեպո (հետգնման) պայմանագրեր	1,591,432	3,933,051
- ակրեդիտիվներ և բանկային երաշխիքներ	-	-
-այլ	445,084	83
ԲԲԲ-(Բաա3) և բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական կազմակերպություններում՝	255,659	251,019
- վարկեր և ավանդներ	-	-
- ֆակտորինգ	-	-
- ֆինանսական վարձակալություն	-	-
- ռեպո (հետգնման) պայմանագրեր	-	-
- ակրեդիտիվներ և բանկային երաշխիքներ	-	-
-այլ	255,659	251,019
ԲԲԲ-(Բաա3)-ից ցածր վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող ֆինանսական կազմակերպություններում	-	297,610
- վարկեր և ավանդներ	-	-
- ֆակտորինգ	-	-
- ֆինանսական վարձակալություն	-	-
- ռեպո (հետգնման) պայմանագրեր	-	-
- ակրեդիտիվներ և բանկային երաշխիքներ	-	-
այլ*	-	297,610
Հաշվեգրված տոկոսներ	14,180	21,818
Ձուտ պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	4,406,979	6,727,848
Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով հնարավոր կորուստների պահուստ	(7,016)	(22,396)
Ձուտ պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	4,399,963	6,705,452
Ձուտ պահանջներ ֆինանսական կազմակերպությունների և բանկերի նկատմամբ նկատմամբ	11,523,218	10,883,591

*31.12.15թ. դրությամբ այլ պահանջներ ՀՀ բանկերի նկատմամբ տողում արտացոլվել են բանկոմատներով կատարված գործարքների գծով այլ բանկերից ստացվելիք 16 571 հազ.ՀՀ դրամ :

**31.12.14թ. դրությամբ այլ պահանջներ ՀՀ բանկերի նկատմամբ տողում արտացոլվել են բանկոմատներով կատարված գործարքների գծով այլ բանկերից ստացվելիք 36 938 հազ.ՀՀ դրամ

**31.12.15թ. դրությամբ դեպոնացված է ֆինանսական կազմակերպությունում 63 712 հազ.ՀՀ դրամ (134,49 հազ ԱՄՆ դոլար) գումար Մաստեր քարտ և 186 642 ՀՀ դրամ (394.0 հազ ԱՄՆ դոլար) գումար Վիզա քարտ համակարգով գործարքներ իրականացնելու համար:

**31.12.14թ. դրությամբ դեպոնացված է ֆինանսական կազմակերպությունում 63 881 հազ.ՀՀ դրամ (134,49 հազ ԱՄՆ դոլար) գումար Մաստեր քարտ, 187 138 ՀՀ դրամ (394.0 հազ ԱՄՆ դոլար) և 5 000 հազ.ՀՀ դրամ գումարներ Վիզա քարտ համակարգով գործարքներ իրականացնելու համար:

Ծանոթագրություն 16

Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ

	31.12.2015	31.12.2014
Վարկեր,այդ թվում՝	54,996,259	54,964,253
ՀՀ Կառավարությանը	369,524	-
տեղական ինքնակառավարման մարմիններին	-	-
հիպոթեքային	5,444,765	4,605,197
Օվերդրաֆտ	4,222,397	3,104,359
Վարկային քարտեր	7,941,317	8,761,992
Ֆակտորինգ	-	-
Ֆինանսական լիզինգ	80,192	102,837
Հետգնման պայմանագրեր	-	228,208
Ակրեդիտիվներ և բանկային երաշխիքներ	-	-
Այլ	-	-
Նշված հոդվածների գծով հաշվեգրված տոկոսներ և ստացվելիք վճարներ	469,455	445,493
Ընդամենը վարկեր	67,709,620	67,607,142
Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գծով հնարավոր կորուստների պահուստ	(1,627,449)	(1,620,297)
Ընդամենը զուտ վարկեր	66,082,171	65,986,845

31.12.15թ. դրությամբ միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցներով տեղաբաշխվել է 26 228 952 հազ. ՀՀ դրամ գումարի 2 538 հատ վարկ:

31.12.14թ. դրությամբ միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցներով տեղաբաշխվել է 33 502 664 հազ. ՀՀ դրամ գումարի 3 022 հատ վարկ:

Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ

	31.12.2015	31.12.2014
Վարկեր,այդ թվում՝		
Ստանդարտ	66,015,057	65,761,625
Հսկվող	426,391	862,562
Ոչ ստանդարտ	481,387	337,581
Կասկածելի	786,785	645,374
Անհուսալի*	3,089,871	1,877,633
Ընդամենը վարկեր	67,709,620	67,607,142
Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գծով հնարավոր կորուստների պահուստ	(1,627,449)	(1,620,297)
Ընդամենը զուտ վարկեր	66,082,171	65,986,845

*31.12.2015.թ. դրությամբ անհուսալի վարկերի 17.4% կազմում են մինչև 01.01.2005թ. դուրս գրված վարկերը:

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ վարկային պորտֆելում հաճախորդներին տրամադրված արժեզրկված (չաշխատող) վարկերի և փոխատվությունների կառուցվածքը	31.12.2015		31.12.2014	
	գումարը	քանակը	գումարը	քանակը
	Վարկեր և փոխատվություններ, որից	67,709,620	29,851	67,607,142
արժեզրկված (չաշխատող) վարկեր և փոխատվություններ, այդ թվում՝	1,694,563	445	1,849,854	375
ժամկետանց	306,418	329	141,804	264
վերաձևակերպված*	2,084	1	3,091	1
վերաֆինանսավորված*	-	-	-	-
Ընդամենը վարկեր	67,709,620	29,851	67,607,142	26,159
Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գծով հնարավոր կորուստների պահուստ	(1,627,449)	-	(1,620,297)	-
Ընդամենը զուտ վարկեր	66,082,171	29,851	65,986,845	26,159

Տրամադրված վարկերի և փոխատվությունների վերլուծությունն ըստ հաճախորդների	31.12.2015		31.12.2014	
	գումար	վարկառուների քանակ	գումար	վարկառուների քանակ
Բանկեր	2,176,863	3	-	-
Ֆինանսական կազմակերպություններ	2,100,624	35	2,224,267	52
Պետական ձեռնարկություններ	496,887	2	561,815	2
Մասնավոր ձեռնարկություններ, այդ թվում՝	38,098,439	1,156	36,613,864	1,279
խոշոր ձեռնարկություններ	10,931,890	113	4,403,293	60
փոքր և միջին ձեռնարկություններ*	27,166,549	1,043	32,210,571	1,219
Ֆիզիկական անձինք, այդ թվում՝	19,336,955	27,125	18,130,244	22,867
սպառողական վարկեր	4,963,757	16,710	4,011,232	12,806
հիփոթեքային վարկեր	5,444,765	624	4,605,197	550
վարկային քարտեր	7,598,712	8,749	8,290,823	8,520
այլ վարկեր	1,329,721	1,042	1,222,992	991
Անհատ ձեռնարկատերեր	9,307,884	1,568	11,855,726	2,011
Հաշվեզրկված տոկոսներ	469,455	-	460,840	-
Ընդամենը	71,987,107	29,889	69,846,756	26,211
Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գծով հնարավոր կորուստների պահուստ	(1,627,449)	-	(1,642,693)	-
Ընդամենը զուտ վարկեր	70,359,658	29,889	68,204,063	26,211

31.12.2015թ. դրությամբ բանկի խոշոր փոխառուների և նրանց հետ փոխկապակցված անձանց տրամադրված վարկերի և պայմանական պարտավորությունների ընդհանուր գումարը կազմել է 16 099 159 հազ դրամ, որը կազմել է վարկային և պայմանական պարտավորությունների պորտֆելի 22.4%-ը և նորմատիվային կապիտալի 75.82%-ը:

31.12.2014թ. դրությամբ բանկի խոշոր փոխառուների և նրանց հետ փոխկապակցված անձանց տրամադրված վարկերի և պայմանական պարտավորությունների ընդհանուր գումարը կազմել է 14 435 401 հազ դրամ, որը կազմել է վարկային և պայմանական պարտավորությունների պորտֆելի 18.77%-ը և նորմատիվային կապիտալի 67.3%-ը:

Տրամադրված վարկերի և փոխատվությունների վերլուծությունն ըստ վարկավորման ոլորտների	31.12.2015	Տոկոսային հարաբերությունը	31.12.2014	Տոկոսային հարաբերությունը
Արդյունաբերություն	4,417,443	6.57	5,397,075	8.04
Գյուղատնտեսություն	1,563,658	2.33	1,477,374	2.20
Շինարարություն	3,611,785	5.37	2,720,921	4.05
Տրանսպորտ և կապ	5,133,705	7.63	1,733,792	2.58
Առևտուր	25,590,205	38.06	29,383,707	43.75
Սպառողական	12,556,120	18.67	12,302,056	18.32
Հիփոթեքային վարկեր	5,444,765	8.10	4,605,197	6.86
Սպասարկման ոլորտ	5,395,629	8.02	5,336,170	7.95
Այլ	3,526,855	5.25	4,205,357	6.25
Հաշվեգրված տոկոսներ	469,455	-	445,493	-
Ընդամենը	67,709,620	100.00	67,607,142	100.00

Հաճախորդների ռեզիդենտության առումով վարկային պորտֆելի վերլուծությունը	31.12.2015	Տոկոսային հարաբերությունը	31.12.2014	Տոկոսային հարաբերությունը
ՀՀ ռեզիդենտներ	67,235,084	99.99	67,069,993	99.86
ԲաաՅ/ և բարձր վարկանիշ ունեցող երկրների ռեզիդենտներ*	4,835	0.01	90,428	0.13
ԲԲԲ-/ԲաաՅ/-ից ցածր վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող երկրների ռեզիդենտներ*	246	0.00	1,228	0.01
Հաշվեգրված տոկոսներ	469,455	-	445,493	-
Ընդամենը	67,709,620	100	67,607,142	100

Վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության	31.12.2015	31.12.2014
Անշարժ գույք	46,989,814	53,585,985
Շարժական գույք	600,256	595,724
Շրջանառու միջոցներ	386,212	101,645
Կազմակերպությունների և ֆիզիկական անձանց երաշխիքներ	1,586,335	1,243,437
Թանկարժեք գարդեր, ոսկու ջարդոն	5,584,363	4,415,862
Դրամական հոսքեր	6,765,260	6,735,690
Դրամական միջոցներ	1,866,865	615,128
Այլ	3,930,515	313,671
Ընդամենը վարկեր	67,709,620	67,607,142

Ծանոթագրություն 17
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Պետական արժեթղթեր	31.12.2015	31.12.2014
ՀՀ Պետական պարտատոմսեր	15,054,602	15,368,442
- գանձապետական պարտատոմսեր	15,054,602	15,368,442
- կենտրոնական բանկի պարտատոմսեր	-	-
-այլ	-	-
ԲԲԲ-(Բաա3) և բարձր վարկանիշ ունեցող երկրների պետական արժեթղթեր, այդ թվում	-	-
- գանձապետական պարտատոմսեր	-	-
- կենտրոնական բանկի պարտատոմսեր	-	-
-այլ	-	-
ԲԲԲ+(Բա1) և ցածր վարկանիշ ունեցող,ինչպես նաև վարկանիշ չունեցող երկրների պետական արժեթղթեր, այդ թվում	-	-
- գանձապետական պարտատոմսեր	-	-
- կենտրոնական բանկի պարտատոմսեր	-	-
-այլ	-	-
Ընդամենը պետական արժեթղթեր	15,054,602	15,368,442

ՀՀ ոչ պետական արժեթղթեր	31.12.2015		31.12.2014	
	ցուցակված	չցուցակված	ցուցակված	չցուցակված
Ա-/Ա3/ և բարձր վարկանիշ ունեցող թողարկողի	-	-	-	-
- երկարաժամկետ պարտքային գործիքներ	-	-	-	-
- կարճաժամկետ պարտքային գործիքներ	-	-	-	-
- ավանդային հավաստագրեր	-	-	-	-
- կապիտալի գործիքներ	-	-	-	-
- այլ	-	-	-	-
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից «Գ -» և բարձր վարկանիշ ստացած թողարկողի	-	-	-	-
- երկարաժամկետ պարտքային գործիքներ	-	-	-	-
- կարճաժամկետ պարտքային գործիքներ	-	-	-	-
- ավանդային հավաստագրեր	-	-	-	-
- կապիտալի գործիքներ	-	-	-	-
- այլ	-	-	-	-
ԲԲԲ+/Բաա1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող թողարկողի	34,260	54,497	-	54,497
- երկարաժամկետ պարտքային գործիքներ	34,260	-	-	-
- կարճաժամկետ պարտքային գործիքներ	-	-	-	-
- ավանդային հավաստագրեր	-	-	-	-
- կապիտալի գործիքներ	-	54,497	-	54,497
- այլ	-	-	-	-
Ընդամենը ՀՀ ոչ պետական արժեթղթեր	34,260	54,497	-	54,497

Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր	31.12.2015		31.12.2014	
	ցուցակված	չցուցակված	ցուցակված	չցուցակված
Ա-/Ա3/ և բարձր վարկանիշ ունեցող թողարկողի	-	-	-	-
- երկարաժամկետ պարտքային գործիքներ	-	-	-	-
- կարճաժամկետ պարտքային գործիքներ	-	-	-	-
- ավանդային հավաստագրեր	-	-	-	-
- կապիտալի գործիքներ	-	-	-	-
- այլ	-	-	-	-
ԲԲԲ+/Բաա1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող թողարկողի	-	1,342	-	1,342
- երկարաժամկետ պարտքային գործիքներ	-	-	-	-
- կարճաժամկետ պարտքային գործիքներ	-	-	-	-
- ավանդային հավաստագրեր	-	-	-	-
- կապիտալի գործիքներ	-	1,342	-	1,342
- այլ	-	-	-	-
Ընդամենը այլ երկրների ոչ պետական արժեթղթեր	-	1,342	-	1,342

Ընդամենը վաճառքի համար մատչելի արժեթղթեր	15,144,701	15,424,281
---	-------------------	-------------------

Ընդամենը վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	15,144,701	15,424,281
---	-------------------	-------------------

Ներդրումներ այլ անձանց բաժնետիրական կապիտալում 31.12.2015թ. դրությամբ

Անձի անվանումը	Հիմնական գործունեությունը	Գրանցման երկիրը	Ներդրման ամսաթիվը	Ներդրումը (հազ. դրամ)	Բաժնեմասը %
«ԱՐՄԵՆԻԱՆ ՔԱՐԴ» ՓԲԸ	Վճարահաշվարկային ծառայություններ	Հայաստանի Հանրապետություն	26.12.06.թ.	48,572	5.0
«ԱՔՈԱ ՔՐԵԴԻՏ ՈՒՓՈՐԹԻՆԳ» ՓԲԸ	տեղեկատվական ծառայություններ	Հայաստանի Հանրապետություն	14.12.07թ.	5,925	1.0
«ՍՎԻՖԹ» համակարգ	Վճարահաշվարկային ծառայություններ	Բելգիա	01.11.97թ.	1,342	0.0
ԸՆԴՀԱՆՈՒՄ				55,839	

2014թ. և 2015թ. չորրորդ եռամսյակում մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները բացակայում են:

2014թ. և 2015թ. չորրորդ եռամսյակում ներդրումներ վերահսկվող անձանց կանոնադրական կապիտալում չեն կատարվել:

Ծանոթագրություն 20 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հոդվածի անվանումը	Շենքեր	Համակ. և կապի միջոցներ	Տնտեսական գույք	Փոխադրա - միջոցներ	Վարձ. գույքի բարելավումներ	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Հաշվեկշռային արժեք							
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում	1,638,188	1,393,228	561,917	97,260	202,254	310,611	4,203,458
Սկզբնական մնացորդի ճշգրտում	-	-	-	-	-	-	-
Ավելացում	98,514	50,493	65,268	61,667	25,922	189,791	491,655
Օտարում	-	(35,140)	(1,662)	(36,277)	(8,230)	(26,260)	(107,569)
Դուրսգրում	-	(542)	(18,427)	-	(25,552)	-	(44,521)
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջում	1,736,702	1,408,039	607,096	122,650	194,394	474,142	4,543,023
Մնացորդի ճշգրտում	(5,712)	69	(259)	-	190	-	(5,712)
Ավելացում	317	290,546	63,132	-	7,297	26,820	388,112
Օտարում	-	(309)	-	-	-	-	(309)
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	1,731,307	1,698,345	669,969	122,650	201,881	500,962	4,925,114
Կուտակված մաշվածություն							-
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում	190,446	787,705	319,620	49,373	115,250	106,613	1,569,007
Ավելացում	53,709	214,313	82,686	22,855	31,200	35,989	440,752
Օտարում	-	(39,398)	(1,718)	(26,961)	(1,837)	-	(69,914)
Վերադասակարգում	-	-	-	-	-	-	-
Դուրսգրում	-	(241)	(14,444)	-	(27,202)	-	(41,887)
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջում	244,155	962,379	386,144	45,267	117,411	142,602	1,897,958
Ավելացում	54,892	218,838	88,273	23,111	26,040	47,596	458,750
Օտարում	-	(309)	-	-	-	-	(309)
Դուրսգրում	-	-	-	-	-	-	-
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	299,047	1,180,908	474,417	68,378	143,451	190,198	2,356,399
Զուտ հաշվեկշռային արժեք							
Հաշվետու ժամանակաշրջանի վերջում	1,432,260	517,437	195,552	54,272	58,430	310,764	2,568,715
Նախորդ ժամանակաշրջանի վերջում	1,492,547	445,660	220,952	77,383	76,983	331,540	2,645,065

Կապիտալ ներդրումներ բանկի հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում	31.12.2015	31.12.2014
Կապիտալ ներդրումներ բանկի հիմնական միջոցներում	2,257,951	2,313,525
Կապիտալ ներդրումներ բանկի ոչ նյութական ակտիվներում	310,764	331,540
Ընդամենը	2,568,715	2,645,065

* 2015թ. չորրորդ եռամսյակի հիմնական միջոցներում չի արտացոլված 2007թ. շահագործումից հանված և վերադասակարգված բանկի սեփականությունը հանդիսացող Խաղաղ Դոնի 13/1 շենքը (32,207 հազ. դրամ), որը ներառված են սույն հաշվետվության 20-րդ ծանոթագրությունում (Վաճառքի համար պահվող արժեքներ):

* 2014թ. հիմնական միջոցներում չի արտացոլված 2007թ. շահագործումից հանված և վերադասակարգված բանկի սեփականությունը հանդիսացող Խաղաղ Դոնի 13/1 շենքը (32,207 հազ. դրամ), որը ներառված է սույն հաշվետվության 20-րդ ծանոթագրությունում (Վաճառքի համար պահվող արժեքներ):

* 2015թ. չորրորդ եռամսյակի ընթացքում շահագործումից դուրս 369 հազ.դրամի հիմնական միջոց և ոչ նյութական ակտիվ հանձնվել է շահագործման:

*2014թ. ընթացքում շահագործումից դուրս 67 090 հազ.դրամի հիմնական միջոց և ոչ նյութական ակտիվ հանձնվել է շահագործման:

Ծանոթագրություն

Վաճառքի համար պահվող ակտիվներ

	31.12.2015	31.12.2014
Բնագանձված գրավ	746,859	297,493
Շահագործումից հանված հիմնական միջոցներ	32,207	32,207
Ընդամենը	779,066	329,700

Ծանոթագրություն 21

Այլ ակտիվներ

	31.12.2015	31.12.2014
Ստացվելիք շահաբաժիններ	-	-
Հավատարմագրային կառավարման գործառնությունների գծով ստացվելիք գումարներ	-	-
Այլ գործառնություններից ստացվելիք գումարներ	265,131	319,849
Հեջավորման ածանցյալ գործիքներ	-	-
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	4,120	348
